ՔԱՂԱՔԱԿԱՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ VII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ. ՀԱՅ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

610 թ. բյուզանդական գահ է բարձրանում Հերակլիոսը (610-641)՝ շուրջ մեկ դար թագավորած Հերակլիոսների հարստության հիմնադիրը: Նրա գահակալությունն սկսվում է Բյուզանդիայի համար բավական ծանր ժամանակաշրջանում: Ինչպես Թեոփանես Խոստովանողն է պատմում՝ «...կայսրը հռոմայեցիների պետության գործերը գտավ անմխիթար վիճակում ... բովանդակ Ասիան ավերակ էին դարձրել պարսիկները...»[1]: Փոկասի (602–610) գահակալությունից ի վեր՝ Խոսրով II Փարվեզը (590–628) չէր դադարեցնում նվաճողական արշավանքները դեպի Բյուզանդիա՝ «քանզի հույս ուներ, որ իրեն կհաջողվի ամբողջությամբ նվաճել հռոմայեցիների տերությունը»[2]: Նոր կայսրի՝ արքայից արքայի հետ հաշտություն կնքելու և արյունահեղ պատերազմները դադարեցնելու փորձերը որևէ արդյունք չեն տալիս, ու արդեն Հերակլիոսի գահակալության սկզբնական շրջանը նշանավորվում է պարսկական նոր հաղթանակներով. նվաճվում են Ասորիքը, Կիլիկիան, Եգիպտոսը: 614 թ. պարսից զորքերը, գրավելով Երուսաղեմը, գերեվարում են Տիրոջ Խաչափայտը[3]: Կայսրության այսօրինակ անմխիթար կացությունն էր, որ հարկադրեց Հերակլիոսին վճռականորեն նախապատրաստվել հակահարվածի: 622 թ. կայսրը ձեռնարկում է պարսկական արշավանքը: Հետաքրքիր է, որ շուրջ երկու դար բյուզանդական կայսրերից և ոչ մեկն անձամբ չէր գլխավորել բանակը պատերազմի: Պետության համար նման ծայրահեղ ծանր իրավիճակ վերջին ժամանակահատվածում տակավին չէր ստեղծվել: Եվ հենց այս հանգամանքն է ստիպում Հերակլիոսին ստանձնել բանակի հրամանատարությունը: Ինչպես Թեոփանեսն է վկայում, պատերազմական գործողությունների ծախսերին ներդրվում են անգամ եկեղեցու սպասքն ու բազմականթեղ ջահերը, որոնցից ոսկե և արծաթե դրամներ են կտրում[4]: 6 տարվա ընթացքում (622–628 թթ.) մեկը մյուսի հետևից վերագրավվում են Բյուզանդիայի արևելյան պրովինցիաները: 627 թ. բյուզանդական զորքերը

---

[1] *Թ ե ո փ ա ն ե ս Խ ո ս տ ո վ ա ն ո ղ. Ժամանակագրություն, թարգմանութ-յունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, 4 (այսուհետև՝ Թ ե ո փ ա ն ե ս), Երևան, 1983, էջ 13:*

[2] *Նույն տեղում, էջ 14:*

[3] *Ի դեպ, քրիստոնեական աշխարհին այս իրադարձությունն ավելի է հուզել, քան հետագայում «Խաչափայտի ազատագրումը Հերակլիոսի կողմից» և միջնադարյան տարատեսակ աղբյուրներում ավելի հաճախ Երուսաղեմի առումն ու ավերումն է նկարագրվում, քան Խաչափայտի վերադարձը:*

[4] *Թ ե ո փ ա ն ե ս, էջ 18:*

շարժվում են Տիգբոնի վրա: Այս իրադարձությունը զուգորդվում է գահակալական հանկարծահաս տեղաշարժով: Բանակցելով մի կողմից բյուզանդական կայսեր, մյուս կողմից արքայից արքայի քաղաքականությունից դժգոհ ստվար համախոհների հետ և սպանելով Խոսրով II-ին՝ գահ է բարձրանում նրա որդին՝ Կավատ II-ը (628 թ. փետրվար–սեպտեմբեր): Ավարտվում է Խոսրով II Փարվեզի երկարատև գահակալությունը, որը «պարսից թագավորությունը ամենափառավոր գագաթնակետին հասցնելեն ետքը, հաջողութենեն զեղծանելով, զայն հետին անկման մեջ թողուց»[5]:

Այսպիսով, ջախջախված էր Սասանյան Պարսկաստանը[6]: Խաղաղություն է վերահաստատվում երկու տերությունների միջև, որ խախտվել էր շուրջ երեք տասնամյակ՝ 602 թ. ի վեր: Իրադարձությունների այս հորձանուտում համայն քրիստոնեության համար արտակարգ դեպք էր Խաչափայտի վերադարձնելը Երուսաղեմ 629/30 թթ., որով նշանավորվում է եկեղեցու մեծ տոներից մեկը սեպտեմբերի 14-ին՝ Խաչվերացի (Վերացման Խաչի) և կամ էլ պատվական Խաչի մեծ տոնը:

Արևելյան նահանգների վերագրավումը կայսրությանը կանգնեցրեց բազմահազար քրիստոնյաների դեմ, որոնք չէին հարում Քաղկեդոնի ժողովի (451 թ.) դավանությանը: Չ. Հեֆելը հետաքրքիր տվյալներ է հաղորդում առ այն, որ հակաքաղկեդոնիկները թե՛ ազգային և թե՛ դավանական առումով շատ ավելի բազմաքանակ էին քաղկեդոնիկների համեմատությամբ. օրինակ՝ Եգիպտոսում 300.000 հույն մելքիտների[7] դիմաց կային 5–6 մլն դպտի միաբնակներ[8]: Ասորիքում և Միջագետքում տարածված էր գերազանցապես հակոբիկ և նեստորական կրոնը, իսկ հայոց եկեղեցին նախնավանդ միաբնակությունն էր վարդապետում:

Նկատի առնելով այն հանգամանքը, թե եկեղեցին որքան ազդեցիկ էր բյուզանդական կայսրության մեջ՝ հասկանալի կլինի Հերակլիոսի խորը մտահոգությունը, որի պատճառը եկեղեցական միասնության թուլացումն էր: Սկսած V դ. 2-րդ կեսից բյուզանդական կայսրերը, գրեթե առանց բացառության, ներգրավվել են քաղկեդոնական պրոբլեմի մեջ: Եվ ամենաուշագրավն այն է, որ նրանց մեծ մասը կա՛մ հովանավորում էր հակաքաղկեդոնական շարժումը և կա՛մ էլ պատրաստ էր գնալ փոխզիջման՝ Քաղկեդոնի կարևորությունը նվազեցնելու ճանապարհով: Այս քաղաքականությունն ակնհայտ է նաև Հերակլիոսի դեպքում: Վերջինս երազում էր հնարավորինս ավարտին հասցնել այն, ինչ շատ կայսրեր փորձել էին ապարդյուն. քրիստոնեական բոլոր «հերձվածները» միավորել բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցուն մի նոր բանաձևով, որն իր վարդապետությամբ կլիներ շատ ավելի ներա-

---

[5] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. I, Կ. Պոլիս, 1912, սյն 664:*

[6] *Դարաշրջանի համար աննախադեպ այս իրադարձությունն իր արտացոլումն է գտել նաև հայ միջնադարյան աղբյուրներում՝ Սեբեոս, Հովհան Մամիկոնյան, Մովսես Կաղանկատվացի և այլն:*

[7] *Մելքիտները քաղկեդոնիկ ասորիներն են (ասորերեն մելեք՝ թագավոր բառից, թագավորականներ, այսինքն՝ թագավորի դավանության կողմնակիցներ):*

[8] C. - J. H e f e l e. Histoire des conciles d'apre's les documents originaux. T. 4, Paris, 1870, p. 12. *Մատնանշելով Հեֆելի աշխատությունը՝ թվային այս տվյալները նշում է նաև բյուզանդագետ Ջ. Բարին, սակայն զարմանալիորեն մելքիտների քանակը դարձնելով 30.000. տե՛ս* J. B u r y. A History of the Later Roman Empire (395 A. D. to 800 A. D.). V. II, Amsterdam, 1966, p. 249.

ռուն և ճկուն[9]: Այսպես երևան է գալիս հավատո խոստովանության նոր բանաձևը՝ միակամությունը:

Քրիստոսի ներգործության և կամքի շուրջ բանավեճի ավելի վաղ շրջանում ավելի հարմար է օգտագործել «միաներգործություն» տերմինը, որովհետև նախապես կյանքի է կոչվում «մի ներգործության» գաղափարը, որի համաձայն Քրիստոս ունի երկու բնություն, և քանի որ այդ երկու բնություններն ամփոփված են մեկ անձի մեջ, ապա Քրիստոս ունի մեկ ներգործություն:

Միակամության գաղափարի իրական հեղինակը Կ. Պոլսի պատրիարք Սերգիոսն էր (610–638): Թե Հերակլիոսը որքան հեռու էր աստվածաբանական նմանօրինակ հարցերից, վկայում է Թեոփանեսը. «Կայսրը, հարցին անտեղյակ, գրեց Սերգիոս պատրիարքին...»[10]: Վերջինս խոստովանում է Քրիստոսի մեջ առկա մեկ բնական կամքի և մեկ ներգործության մասին[11]: Ակներև է, որ վերոնշյալ հարցի շուրջ հենց այդպես էր մտածում Սերգիոսը, անգամ շատ ավելի վաղ, երբ տակավին հարցը չէր ստացել զուտ քաղաքական նշանակություն և չէր գծագրվել դրանից օգուտ քաղելու գաղափարը: Փասիսի եպիսկոպոս Կյուրոսին ուղղած պատրիարք Սերգիոսի նամակը[12] որոշ լուսաբանումներ է տալիս մի կամքի վարդապետության ծագման մասին: Այստեղ համառոտ շարադրվում է, որ թեև Եկեղեցու Հայրերից և ոչ մեկը բացորոշ չի արտահայտվել սույն խնդրի շուրջ, թեև եկեղեցական մեծ ժողովները ևս չեն անդրադարձել հարցին, այնուամենայնիվ, հենց այդպես էր մտածում Կյուրեղ Ալեքսանդրացին իր գրություններում, նաև՝ Մեննաս Կոստանդնուպոլսեցին, որի՝ Հռոմի պապ Վիգիլիոսին ուղղած նամակում առկա է միակամության վարդապետությունն արտահայտող հատվածների ամբողջ մի շարք:

Փաստորեն, նորահայտ այս դավանության մեջ Սերգիոսը ձգտում էր հիմնվել Եկեղեցու պատկառելի Հայրերի վրա, մասնավորապես՝ Կյուրեղ Ալեքսանդրացու (Ալեքսանդրիայի պատրիարք 375–444), որը տիեզերական եկեղեցու խոշորագույն հեղինակություններից մեկն է առհասարակ: Այսպիսով, մի ներգործության վարդապետությունը տրամաբանական շարունակությունն էր քրիստոսաբանության շուրջ ծավալված հնագույն կոնֆլիկտի, այն իրապես «բնականոն զարգացումն էր V դարի քրիստոսաբանական բանավեճերի»[13]:

Պատրիարք Սերգիոսը բավական ազդեցիկ անձնավորություն էր: Թեկուզ այն հանգամանքը, որ, սկսելով իր պարսկական արշավանքը, Հերակլիոսը հենց պատրիարքին է կարգադրում գործերը կառավարել իր բացակայության ընթացքում, ա-

---

[9] *Այս առումով առաջին քայլը կատարվել էր դեռևս 482 թ. Զենոն կայսեր կողմից, երբ հրապարակվում է նշանավոր Հենոտիկոնը՝ «միության գիրը» երկու կողմերի հաշտեցման մի էդիկտ. տե՛ս «Գիր միաւորութեան».– Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 271:*

[10] *Թ ե ո փ ա ն ե ս, էջ 39:*

[11] *Թեոփանեսի համար պատրիարքի նման դավանանքը հետևանք էր վերջինիս՝ ազգությամբ ասորի և հակոբիկ ծնողների որդի լինելու հանգամանքի (նույն տեղում):*

[12] J. D. M a n s i. Sacrorum conciliorum nova et amplissima Collectio. Vol. 11, G.-Austria, 1960, pp. 526, 530.

[13] J. B u r y. *Նշվ. աշխ., էջ 249:*

վելին, իր որդուն թողնում է պատրիարքի խնամքի ներքո[14], ցույց է տալիս, թե որքան էր կայսրը վստահում վերջինիս: Եվ Սերգիոսի մատնանշած ճանապարհը դյուրությամբ ընդունվում է կայսրի կողմից, որովհետև նման վարդապետությամբ հնարավորություն կստեղծվեր, ի վերջո, անջրպետել երկաբնակների և միաբնակների միջև առկա խոր վիհը:

626 թ. Լազիկայում, Սերգիոս պատրիարքի ազդեցությամբ, նոր բանաձևի շուրջն է համախմբվում նաև Փասիսի եպիսկոպոս Կյուրոսը: Վերջինիս ուղղված պատրիարքի նամակին անդրադարձանք վերը: Իր հերթին Կյուրոսը մի նամակ է հղում պատրիարքին[15], ուր փաստվում է կարևոր մի իրադարձության մասին, կարևոր թե՛ միակամության պատմության ուսումնասիրման համար ընդհանրապես, թե՛ հայոց պատմության համար մասնավորապես: Հիշյալ թղթում եպիսկոպոսը վկայում է, թե կայսրի հետ հանդիպման ժամանակ ծանոթացել է այն կարգադրությանը, որ Հերակլիոսն արել էր Կիպրոսի արքեպիսկոպոս Արկադիոսին՝ ընդդեմ հայաստանցի Պողոսի, «որն առաջնորդն էր նրանց, ովքեր մնացել էին առանց եպիսկոպոսների»[16]:

Այս տողերի իմաստը հասկանալու համար հարկավոր է պատմական համառոտ անդրադարձ կատարել: 572–591 թթ. պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ, դեռևս զորավար Մավրիկիոսի կողմից Աղձնիքի նվաճմամբ, շուրջ 10.000 մարդ են գերեվարվում, որոնց մեծագույն մասը հայ միաբնակ քրիստոնյաներ էին: Հովհան Եփեսացին իր «Եկեղեցական պատմության» մեջ մի քանի անգամ անդրադառնում է հիշյալ իրադարձությանը. «...և որովհետև բնակիչները հավատացյալ քրիստոնյաներ էին... աղոթքներով, խաչերով ու ավետարանով դիմավորեցին և նրանցից խոստում վերցրին, որ իրենց կենդանի կթողնեն... շատերը փախան ու գնացին... հոռոմների երկիրը... Կայսրը հրամայեց, որ նրանց ուղարկեն Կիպրոս կղզին և այնտեղ նրանց բաժանեցին կղզու տարբեր գյուղերի վրա»[17]: Հիշյալ իրադարձությունը պատմիչը դնում է Ալեքսանդրի 888 տարում, այն է՝ 577 թ.:

Ազգությամբ հայ Պողոսն առաջնորդն էր այս միաբնակ հայերի, որոնք կես դար անց արդեն մեծ թիվ էին կազմում Կիպրոսում: Ըստ ամենայնի՝ միաբնակ հայերն ընդդիմացել էին բյուզանդական երկաբնակ եկեղեցուն, և Հերակլիոսն ահա կայսերական կարգադրությամբ հորդորում է Արկադիոսին՝ որպես արքեպիսկոպոս օգտագործել իր ազդեցությունը՝ վերականգնելու համար եկեղեցական միասնությունը Կիպրոս կղզում՝ միջոց ունենալով մի ներգործության բանաձևը[18]: Այսպիսով,

---

[14] *Թ ե ո փ ա ն ե ս, էջ 18:*

[15] J. M a n s i. *Նշվ. աշխ., էջ 558:*

[16] *Նույն տեղում:*

[17] *Հ ո վ հ ա ն Ե փ ե ս ա ց ի. Եկեղեցական պատմություն.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8, Ասորական աղբյուրներ, Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 436: Այս մասին տե՛ս նաև էջ 452, 458,* J. B u r y. *Նշվ. աշխ., էջ 104, 251:*

[18] *Խնդրին անդրադարձել է նաև Չ. Հեֆելը. տե՛ս* C.-J. H e f e l e. *Նշվ. աշխ., էջ 12, 15: Համաձայն գիտնականի՝ Պողոսն իրականում ընդդիմացել է հայ և բյուզանդական եկեղեցական միությանը՝ իրագործված 622 թ. Կարինի ժողովում, ուր հայոց եկեղեցին ընդունել է Քաղկեդոնի ժողովի*

միակամության վարդապետությունն առաջին անգամ հաջողությամբ քարոզվում է Կիպրոսի հայերի շրջանում: Միավորման այս փորձի հաջողությունը փոքր չափագծով, ընդամենը մի կղզու շրջանակում խրախուսում է կայսրին հետագայում ավելի լայնորեն կիրառել նոր բանաձևը:

Պարսկա-բյուզանդական 6-ամյա պատերազմի ավարտից և իր հաջողակ նվաճումներից հետո Հերակլիոսն ավելի մեծ ուշադրություն է դարձնում խնդրին՝ գործելով ավելի բացորոշ ու նպատակասլաց: Թեոփանեսն իրադարձությունները ներկայացնում է այնպես, կարծես վարդապետությունն առաջին անգամ երևան եկավ հենց 629 թ., կայսրի՝ Հիերապոլսում գտնված ժամանակ, երբ դավանաբանական հարցերի շուրջ բանավեճ է սկսվում Հերակլիոսի և հակոբիկների պատրիարք Աթանասիոսի միջև[19]: Արդյունքում կայացվում է համաձայնություն. հակոբիկները «վերադառնում» են եկեղեցու գիրկը (այսինքն՝ հաշտվում են քաղկեդոնականության հետ)՝ նոր տեսության հիմքի վրա, իսկ Աթանասիոսն էլ դառնում է Անտիոքի պատրիարք[20]: Հիշյալ իրադարձությունը մի փոքր այլ է ներկայացնում Միքայել Ասորին: Համաձայն վերջինիս, կայսրը ժամանում է Մենբիջ (Հիերապոլիս) և նրան ընդառաջ է գալիս արդեն իսկ Անտիոքի պատրիարք Աթանասիոսը՝ 12 եպիսկոպոսների հետ: Շուրջ 12 օր դավանական հարցերի շուրջ քննություն է արվում, ապա հավատո մի գիր է տրվում կայսրին, ուր բացորոշ նզովված էր Քաղկեդոնի ժողովը: Եվ երբ եպիսկոպոսներից մեկը հակառակվում է դրան, «թագաւորն հրամայեաց կտրել զքիթ նորա և զպատրիարքն մեծ պատուով արձակեաց»[21]:

Հերակլիոսը, եթե ոչ բարեհաճ, ապա, համենայնդեպս, բավական հանդուրժող էր միաբնակների հանդեպ: Սա պայմանավորված էր գլխավորապես հակաքաղկեդոնիկների թվային գերակշռությամբ: Երբ Ուռհայում վանականների և եկեղեցականների 90.000-ոց բազմություն է ընդառաջ ելնում՝ դիմավորելու կայսրին, վերջինիս տեղեկացնում են, թե նրանք չեն ընդունում Քաղկեդոնի ժողովը և կայսրը «...խոնարհեցոյց զերեսն յերկիր առաջի նոցա և ասաց թե «Չէ արժան զրկել զմեզ յաղօթից այսքան բազմութեան վասն ժողովոյն Քաղկեդոնի»[22]: Հերակլիոսը չէր վարանում անգամ եկեղեցում հաղորդվել միաբնակների հետ[23]:

դավանությունը: Այդ ընդդիմությամբ նա փորձել է արգելել նմանօրինակ միություն նաև Կիպրոսի հայության շրջանում: Սակայն այս դիտողությունը չի համապատասխանում պատմական իրողությանը երկու տեսանկյունից. Կարինի ժողովը գումարվել է 633 թ. միայն, և հայ-բյուզանդական միությունը խարսխվել է ոչ թե Քաղկեդոնի դավանության, այլ միակամության շուրջ:

[19] *Թ ե ո փ ա ն ե ս, էջ 39: Աթանասիոսն ամենամռայլ գույներով է ներկայացվում քաղկեդոնիկ հեղինակի կողմից:*

[20] *Հետաքրքիր է, որ սկզբնապես Հերակլիոսը խոստացել էր նրան պատրիարք նշանակել, եթե Աթանասիոսն ընդուներ Քաղկեդոնի ժողովը (նույն տեղում): Հերակլիոսի նպատակը հակոբիկ ասորիներին միացնելն էր բյուզանդական եկեղեցուն, իսկ թե որ դավանության վրա կխարսխվեր միությունը, այդքան էլ էական չէր:*

[21] *Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորւոց Պատրիարքի (այսուհետև՝ Մ ի ք ա յ ե լ Ա ս ո ր ի), Յերուսաղէմ, 1871, էջ 300:*

[22] *Նույն տեղում, էջ 298-299:*

[23] *Նույն տեղում, էջ 299:*

Վերադառնալով միակամությանը, նշենք, որ նրանով որոշված էր միջին ուղի հարթել հակառակորդ կողմերի միջև գոհացուցիչ մի բանաձևով, որն ընդունելի կլիներ երկու կողմերին: Սակայն նոր բանաձևից շատ ավելի գոհ էին միաբնակները և նոր բանաձևն ավելի հարիր էր մի բնություն քարոզողներին: Ինչպես Թեոփանեսն է վկայում, միաբնակները պարծենում էին՝ ասելով. «ոչ թե մենք միաբանեցինք Քաղկեդոնին, այլ ավելի շուտ Քաղկեդոնը միաբանեց մեզ, Քրիստոսի մեկ ներգործություն խոստովանելով, դրանով իսկ նա մեկ բնություն խոստովանեց»[24]:

Արդեն VII դ. 30-ական թվականների առաջին կեսին մի ներգործության վարդապետության շուրջ են համախմբվում արևելյան խոշորագույն երեք պատրիարքությունները. Կ. Պոլսի՝ հանձին Սերգիոս, Անտիոքի՝ հանձին Աթանասիոս և Ալեքսանդրիայի՝ հանձին Կյուրոս[25] պատրիարքների:

Դավանաբանական այս հորձանուտում չափազանց կարևոր էր նաև պապի դիրքորոշումը: Կ. Պոլսի պատրիարք Սերգիոսը տեղեկացնում է նրան բանավեճի մասին[26], հորդորելով, թե եկեղեցու միությունն, արդեն իսկ վերականգնված[27], չպետք է այլևս վտանգվի վիճահարույց արտահայտությունների որևէ օգտագործմամբ: Այստեղ զգացվում է «Էկթեսիսի»[28] առաջին նուրբ արձագանքը: Հոնորիոս I-ը պատասխան նամակում[29] վերահաստատում է Սերգիոսի հավատո խոստովանությունը՝ իր համաձայնությունը հայտնելով մի կամքի վարդապետությանը: Այս պատասխանը հետագայում տարաբնույթ քննարկումների տեղիք տվեց[30]: Պապն ի-

---

[24] *Թ ե ո փ ա ն ե ս, էջ 40:*

[25] *Փասիսի եպիսկոպոս Կյուրոսը 630 թ. ձեռնադրվում է Ալեքսանդրիայի պատրիարք (630-643)՝ սկսելով մաքառել ֆթարտոլատրերի վտանգավոր աղանդի դեմ (*J. M a n s i. Sacrorum conciliorum..., nova et amplissima Collectio. vol. 9, G.-Austria, 1960, p. 562*):*

[26] J. M a n s i. Sacrorum conciliorum..., vol.11, G-Austria, 1960, p. 530-538.

[27] *Նկատի է առնվում արևելյան պատրիարքությունների համերաշխությունը նոր վարդապետությանը, միևնույն ժամանակ, հայոց եկեղեցու միությունը հենց նույն ճանապարհով, որի մասին դեռ խոսք կլինի:*

[28] *«Էկթեսիսը» (հավատո շարադրությունը) կազմվել է 638 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Էդիկտի տեքստն ամբողջությամբ առկա է 649 թ. Լաթերանի ժողովի 3-րդ նիստի արձանագրության մեջ* (J. M a n s i. Sacrorum conciliorum..., vol. 10, G.-Austria, 1960, p. 991)*: Ի դեպ, 638 թ. վերջին ամիսներին՝ իր մահից առաջ, պատրիարք Սերգիոսը տեղական մի ժողով է գումարում Կ. Պոլսում, ուր դեռևս չհրապարակված «Էկթեսիսը» ներդաշնակ է ճանաչվում առաջին առաքյալների դավանությանը և պարտադիր՝ բոլորի համար (տե՛ս նույն տեղում, էջ 999):*

[29] J. M a n s i. Sacrorum conciliorum..., vol. 11, G.-Austria, 1960, p. 538. *Հ. Հեֆելը տիեզերական ժողովներին վերաբերող իր ընդարձակածավալ աշխատության 4-րդ հատորում բերում է պատասխան այս թղթի ֆրանսերեն թարգմանությունը (տե՛ս* C.-J. H e f e l e. *Նշվ. աշխ., էջ 27-32):*

[30] *Խոսքը վերաբերում է Վատիկանի 1870 թ. ժողովում ընդունված պապական անսխալականության դրույթին: Սակայն քանի որ Հոնորիոս I-ը բանադրվեց և հերձվածող ճանաչվեց Տիեզերական 6-րդ ժողովի կողմից 681 թ. մարտի 28-ին՝ 13-րդ նիստի հենց սկզբում* (J. M a n s i. Sacrorum conciliorum..., vol. 11, G.-Austria, 1960, p. 554*), վերոնշյալ դրույթը դառնում էր խոցելի, որովհետև մի պապ վերջապես անսխալական չէ: Հոնորիոս I-ին արդարացնելու համար պապականությունն առաջ քաշեց այն լուսաբանումը, թե հիշյալ ժողովի արձանագրությունները կեղծվել են Կ. Պոլսի պատրիարք Թեոդորոս I-ի կողմից (677–679, 686–687) և թե իրականում նա է հերետիկոս ճանաչվել հիշյալ ժողովում: Այս «լուսաբանումը» հերքվել է Հ. Հեֆելի կողմից (տե՛ս* C.-J. H e f e l e. *Նշվ. աշխ., էջ 169-191):*

բապես չէր ըմբռնել սայրը տարաձայնությունների շուրջ և վիճահարույց հարցը թվացել է նրան ավելի շուտ քերականական և ոչ թե աստվածաբանական: Մյուս կողմից, 633 թ. Երուսաղեմի պատրիարք է ձեռնադրվում մոլեռանդ և կատաղի հակամիակամական Սոփրոնիոսը (633–638)՝ դառնալով երկակամության կամ երկու կամքի մասին վարդապետության առաջնորդը[31]*: 634 թ. իրեն ենթակա եպիսկոպոսների ժողով գումարելով՝ Սոփրոնիոսը նզովում է միակամության դավանանքը*[32]*: Ժողովի փաստաթղթերը* (Epistola synodica) *ուղարկվում են Կ. Պոլսի պատրիարքին և Հռոմի Հոնորիոս I պապին (625–638):*

639 թ. սկզբին հրապարակվում է նշանավոր «Էկթեսիսը»: Էդիկտի իրական հեղինակը Սերգիոսն էր և ոչ թե Հերակլիոսը[33]*, ինչպես իր ժամանակ «Հենոտիկոնը», որը թեպետ հրապարակվեց Զենոն կայսեր անվամբ, սակայն նրա հեղինակն ու նախագծողը Կ. Պոլսի պատրիարք Ակակիոսն էր (471–489): «Էկթեսիսն» արգելում էր բոլոր ակնարկներն ու հիշատակումները, որ կարվեն մի և կամ երկու ներգործության շուրջ, չնայած, մյուս կողմից, հռչակում էր մի կամքի վարդապետությունը: Համաձայն վերջինիս, Քրիստոս ունի աստվածային և մարդկային բնություններ, բայց քանի որ այդ երկուսը միացած են մեկ անձի մեջ, նա ունի միայն մեկ կամք՝ աստվածայինը: Կայսրի կողմից ստորագրված նոր օրենքը միակամության էության բացատրականով կախվում է սուրբ Սոֆիայի մուտքի պատին:*

Արևելյան չորս պատրիարքությունները[34] *ընդունում են «Էկթեսիսը»: 640 թ. Հռոմի պապ ձեռնադրված Հովհաննես 4-րդը (640–642) եկեղեցական մի ժողով գումարելով Հռոմում 641 թ. սկզբին՝ բանադրում է միակամության վարդապետությունը*[35]*: Եկեղեցական միության այս խախուտ փորձը՝ միակամության ճանապարհով, անջրպետ է առաջացնում Արևելքի և Արևմուտքի միջև: Կրկնվում է մոտավորապես այն, ինչ կատարվեց 482 թ. «Հենոտիկոնի» հրապարակվելուց հետո: Վերջինս պատճառ հանդիսացավ Հռոմի և Կ. Պոլսի միջև 484–518 թթ. տևող խզման:*

591 թ. սկսած, երբ Հայաստանի մեծագույն մասն ընդգրկվում է Բյուզանդական կայսրության կազմում, հայերի համար սկսվում է ազգային ավանդույթներն ու արժեքները պահպանելու մի մաքառում: Վերջինս հանդես է գալիս գլխավորապես կրոնական քողի տակ, հայոց եկեղեցու գլխավորությամբ: Իսկ եկեղեցին, պետա-

---

[31] *Ինչպես Ջ. Բարին է նշում, այս նշանակումը տակտիկական սխալ քայլ էր Հերակլիոսի կողմից (*J. B u r y. *Նշվ. աշխ., էջ 252): Սոփրոնիոսը գտնում էր, որ ուղղափառ եկեղեցու դավանանքը, թեկուզև ի սեր եկեղեցական միության, չպետք է զոհաբերվի և կամ էլ հարմարեցվի եկեղեցական-քաղաքական նպատակահարմարությանը:*

[32] *Այս մասին տե՛ս* Libellus synodicus.– J. M a n s i. Sacrorum conciliorum..., vol. 10, G.-Austria, 1960, p. 607.

[33] *641 թ. սկզբին Հովհաննես 4-րդ պապին ուղղված նամակում Հերակլիոսը որոշակիորեն հերքում է «Էկթեսիսի» շարադրությունը և վերջինիս ամբողջ պատասխանատվությունը դնում Սերգիոսի վրա* (J. M a n s i. Sacrorum conciliorum..., vol. 11, G.-Austria, 1960, p. 9)*:*

[34] *«Էկթեսիսի» հրապարակման տարին վախճանվում է Սոփրոնիոսը և անուղղակի կերպով ապահովվում է նաև Երուսաղեմի աթոռի համաձայնությունը:*

[35] *Այս ժողովի արձանագրությունները թեև չեն պահպանվել, սակայն նրա մասին վկայում է Թեոփանեսը (Թ ե ո փ ա ն ե ս, էջ 40, նաև* Libellus synodicus.– J. M a n s i. Sacrorum conciliorum..., vol. 10, G.-Austria, 1960, p. 607).

կանության բացակայության պայմաններում, յուրահատուկ կառավարչական դեր ուներ հայ ժողովրդի կյանքում: Եկեղեցու դավանանքի և առհասարակ պաշտամունքի ծիսական հարցերը միջնադարում ունեին իրենց քաղաքական նշանակությունը, այսինքն՝ դավանական և ծիսական հարցերի մշակմամբ պահպանվում էր հայոց եկեղեցու ազգային դիմագիծը, անաղարտ էր պահվում այլ եկեղեցիների (թեկուզև քրիստոնյա) օտարամուտ ներգործությունից և գաղափարական միությունից:

Այս առումով ահա կարևորվում է մասնավորապես հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների պատմությունը, որովհետև դրանք իրականում սքողում են քաղաքական հարաբերությունները: Արդեն V դ. կեսերից բյուզանդական առանձին կայսրեր (Հուստինոս II, Մավրիկիոս) փորձեցին հայոց եկեղեցին ստորադասել բյուզանդական եկեղեցուն, որովհետև այն նախապայման կլիներ նաև քաղաքական լիարժեք ենթարկման: Ինչպես Մովսես Կաղանկատվացին է նշում, քաղկեդոնականություն ընդունելուց հետո «...նոցին հաւանեալքն բազում անգամ մրցեցան վասն Հայոց հաւասարել նոցին ... Ջանային իբրև զվրիպեալս շահել զնոսա.»[36]: Այդ փորձերը դրական որևէ արդյունքի չհանգեցրին, որովհետև միությունը խարսխվում էր Քաղկեդոնի դավանության շուրջ, մինչդեռ հայոց եկեղեցին իր հակաքաղկեդոնականության մեջ խիստ հետևողական էր: Քաղկեդոնի 4-րդ տիեզերական ժողովը՝ հայ եկեղեցու դավանաբանական դիրքորոշմանն անհարիր իր վարդապետությամբ, խթանում է նաև հունաբան թարգմանչաց դպրոցի գործունեությանը: Հայերեն են թարգմանվում վաղ միջնադարի փիլիսոփա-աստվածաբանների և մեկնիչների երկերը: Նմանօրինակ թարգմանությունների օգնությամբ ավելի հեշտ էր դիմակայել դավանաբանական բանավեճերում. «այլ թէպէտ թագաւորական հրամանաւ յարակիրթ ճարտարքն Յունաց վստահանային ի սուր լեզուս հելլենական յորդաբանութեամբ յաղթող լինել, սակայն ըստ նմին և պատասխանիս լսէին: Քանզի նորոգ էր ի Հայաստան եկեղեցիս ուսմունք, և յոյն լեզուին տեղեկագոյնք»[37]:

Դրությունը մի փոքր փոխվում է Հերակլիոսի կայսրության շրջանում, երբ Կ. Պոլսի պատրիարքությունը որդեգրում է միակամության վարդապետությունը, իսկ դրանով «փաստորեն վերանում էր իսկական կլասիկ քաղկեդոնականությունը»[38]: Նոր վարդապետությամբ փորձ է արվում վերացնել նաև հայկական ու բյուզանդական եկեղեցիների միջև առաջացած վիհը: Երկու եկեղեցիների այս միության փորձը հայտնի է որպես Կարինի ժողով (633 թ.), որին իրազեկ են միջնադարյան հայ բոլոր հեղինակներն անխտիր (Սեբեոս, Ստեփանոս Տարոնեցի, Սամվել Անեցի, Հովհան Մամիկոնյան, Հովհաննես Դրասխանակերտցի, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան և այլք): Տարաբովանդակ և հաճախ էլ ի-

---

[36] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Ադուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 271:*

[37] *Նույն տեղում, էջ 271-272:*

[38] *Ե ր. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 146-147:*

բարամերժ փաստեր հաղորդելով ժողովի թվագրման, գումարման վայրի, տևողության, մասնակցության, հիշյալ իրադարձությունն ըստ կարևորության որակելու և առհասարակ նրա հետևանքների մասին, այնուամենայնիվ այդ բոլոր աղբյուրները փաստում են երկու եկեղեցիների միության այդ աննախադեպ փորձը: Շեշտում ենք այս հանգամանքը, քանի որ բյուզանդական եկեղեցու հետ հայոց եկեղեցու դավանաբանական «միաբանության» այլևայլ օրինակներում հայ պատմիչներն առանձնակի միտում են դրսևորել՝ իրենց շարադրանքում անտեսել նման բնույթի իրադարձությունները և կամ էլ չափազանց նվազեցնել դրանց կարևորության աստիճանը: Կարինի ժողովի դեպքում կարծեք ամեն ինչ բացորոշ է, թեև չեն պահպանվել հիշյալ ժողովի որոշումները կամ ընդունած կանոնները, մյուս կողմից անորոշ է մնում, թե եղե՞լ են արդյոք դրանք առհասարակ: Կարինի ժողովում, ինչպես տրամաբանորեն ժամանակաշրջանի իրողությունն է փաստում, հայոց Եզր կաթողիկոսին միակամության դավանությունն է ըստ ամենայնի տրամադրվում: Այն բովանդակում էր «մեկ կամք, մեկ ներգործություն» նոր բանաձևը, որի ներքո դյուրին էր «մեկ բնության» դավանությունը հասկանալ[39]: Այսուամենայնիվ, այդ մասին և ոչ մի աղբյուր չի վկայում: Եթե Սեբեոսը, Ստեփանոս Տարոնեցին և Հովհաննես Դրասխանակերտցին նշում են, թե ժողովի դավանաբանական ձեռնարկում նշված էին հայտնի բոլոր հերձվածները, բայց ոչ՝ Քաղկեդոնի ժողովը[40] և թե այդ հավատո խոստովանության հիմքի վրա հայոց կաթողիկոսը հաղորդվում է կայսրի հետ, ապա մյուս կողմից բավական մեծ թվով աղբյուրներ պարզորոշ վկայում են, թե ժողովի արդյունքում հայոց կաթողիկոս Եզր Փառաժնակերտցին դարձավ քաղկեդոնիկ, այսպես. Սամվել Անեցի. «Հերակլի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաք՝ կոչէ և զԵզր ի Հայոց՝ որ տգիտաբար հաւանեալ աղանդոյն Քաղկեդոնի...»[41], Վարդան Արևելցի. «...զԵզր Նիգացի, զոր կոչեաց թագաւորն ի Կարնոյ քաղաք, որ վասն տգիտութեանն իւրոյ քաղկեդոնիկ եղև...»[42], Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրության մեջ. «... արար ժողով... առ Եզրիւ կաթողիկոսիւ

[39] *Վ. Գրյումելի կարծիքով Կարինի ժողովում Հայոց կաթողիկոսին առաջարկված հավատո խոստովանությունը Հերակլիոս կայսեր «Էկթեսիսն» էր: Գիտնականը նկատի ունի «Էկթեսիսի» նախնական ծրագիրը, որը պաշտոնապես հրապարակվում է միայն 639 թ. (տե՛ս* V. G r u m e l. Recherches suz l'Histoire du monothelisme. Echos d'Orient. T. 27, Paris, 1928, p. 15-16*):*

[40] *«...նգովեալ էր զՆեստոր և զամենայն հերձուածողս բայց ոչ էր նգովեալ զժողովն Քաղկեդոնի».– Սեբէոսի Պատմութիւն, աշխատասիրությամբ Գ. Արգարյանի (այսուհետև՝ Ս ե բ է ո ս), Երևան, 1979, էջ 132, հմմտ. «...նգովեալ զամենայն հերձուածողս բաց ի ժողովոյն Քաղկեդոնի».– Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական (այսուհետև՝ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր օ ն ե ց ի), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 87, հմմտ. «նգովել զամենայն հերձուածողս, բաց ի ժողովոյն Քաղկեդոնի».– Յովհաննես Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի), Թիֆլիս, 1912, էջ 77: Երեք պատմիչներն էլ օգտագործում են բառային նույն արտահայտությունները: Այս դեպքում Տարոնեցին և Դրասխանակերտցին որպես աղբյուր օգտագործել են Սեբեոսի երկը:*

[41] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 79:*

[42] *Վարդանայ Վարդապետի հաւաքումն Պատմութեան (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի), Վենետիկ, Ս. Ղազար, 1862, էջ 61:*

Հայոց ... յորում Հայք քաղկեդոնիկք եղեն, և զժողովն ընկալան»[43], *Կիրակոս Գանձակեցի. «Իսկ Հերակլ ... ժողով արարեալ կոչէ և զԵզր կաթողիկուս Հայոց ... երթեալ հաւանի աղանդոյն Քաղկեդոնի ..»*[44], *Ստեփանոս Օրբէլյան. «... գնացին միաբան առ թագաւորն և յանձն առին զՔաղկեդոնին ...»*[45]*: Եզրի՝ քաղկեդոնականությանը հարած լինելու փաստն առկա է նաև Գիրք թղթոց ժողովածուի մեջ պահպանված «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք» փաստաթղթում. «...վասն զի հաւանեալ ընկալաւ զժողովն Քաղկեդոնի»*[46]*: Հայ միջնադարյան աղբյուրների շարքում իր քաղկեդոնական ոգով զատորոշվող «*Narratio de rebus Armeniae*»-ն ևս հաստատում է, թե ժողովը գումարվեց հատկապես Քաղկեդոնի ժողովի հարցի շուրջ*[47]*: Ուղղվածությամբ քաղկեդոնիկ այս աղբյուրի նման պնդումը, մեր կարծիքով, ավելի քան բնական է:*

XIII դ. պատմիչ Միքայել Ասորին ևս իրազեկ է ժողովի պատմությանը. «... Հերակլ դարձոյց զբազումս ի Հայոց յաղանդն իւր ի ձեռն Եզրի ... և խաբեաց զանմտութիւն նորա»[48]*: Ընթերցողին, անշուշտ, անորոշ կմնար, թե ինչ է պետք հասկանալ «աղանդի» ներքո, եթե հեղինակը իրադարձությունների մի նախընթացով ակնհայտ չդարձներ, որ հենց քաղկեդոնականությունն է պարտադրվել Հայոց կաթողիկոսին: Բազմիցս փաստելով Հերակլիոսի հանդուրժողականությունը հակաքաղկեդոնիկների հանդեպ՝ պատմիչն այնուհետև նշում է, թե Անտիոքում քաղկեդոնիկներն ու իշխանները խորհուրդ են տալիս Հերակլիոսին հրաժարվել իր դավանությունից, որն արժանացել է հռոմայեցիների ատելությանը, ապա թե՝ «ոչ կարես յերկարել ի թագաւորութիւնդ ... Եվ պատրեալ զթագաւորն՝ սիրեաց զփառս մարդկան, քան զփառս Աստուծոյ, և ետ հրաման այլ մի երեւել առաջի նորա՝ որ ոչ դաւանի զՔաղկեդոնին»*[49]*: Այս լուսաբանումը նախորդում է Կարինի ժողովի իրադարձությունների նկարագրմանը:*

Հետաքրքիր է, որ հետագա դարերում եկեղեցադավանաբանական կարգի գրություններում Եզր Փառաժնակերտցու անվան սկզբնատառը գլխիվայր էր

---

[43] *Պատմութիւն Անանիայի Շիրակայնւոյ Համարողի.– Անանիա Շիրակացու մատենագրությունը, կազմեց Ա. Աբրահամյանը, Երևան, 1944, էջ 397:*

[44] *Կիրակոսի Վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ Պատմութիւն (այսուհետև՝ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի), Վենետիկ, 1865, էջ 31:*

[45] *Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Պատմութիւն նահանգին Սիսական (այսուհետև՝ Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն), Թիֆլիս, 1910, էջ 118:*

[46] *Գիրք թղթոց, էջ 222:*

[47] *«... և հայերը համոզվեցին սուրբ գրքերից և իրենց ձեռքով ստորագրեցին ու երդվեցին այլևս այդ մասին երբեք չհակաճառել».–* «Narratio de rebus Armeniae», *հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր.– Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. Հայ–բյուզանդական հետազոտություններ, հ. (, Երևան, 2002, էջ 108, հմմտ. «...Հաւանեցան Հայք կամաւ և ոչ բռնութեամբ և ընկալան զժողովն Քաղկեդոնի ձեռնագրով».– Թուղթ Փաւտայ պատրիարքի առ Զաքարիայ Կաթողիկոս Հայոց Մեծաց.–* Православный Палестинский сборник. Т. 11, СПб., 1892, с. 182. *Բառային նույն արտահայտությունները հանդիպում ենք նաև Արսեն Սափարացու «Վրաց և հայոց բաժանման մասին» երկում (Լ. Մ ե լ ի ք ս ե թ – Բ ե կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. (, Երևան, 1934, էջ 44-45):*

[48] *Մ ի ք ա յ ե լ Ա ս ո ր ի, էջ 300:*

[49] *Նույն տեղում:*

գրվում՝ ի նշան ավանդական հավատի ուրացության: Պատմիչները ևս դատապարտում են կաթողիկոսին, որակելով տարբեր մակդիրներով, որոնցում նկատի առնելով ժամանակաշրջանի կանխակարծությունը. «քաղկեդոնիկը» ամենածանրն էր: «Սակս ժողովոց...» փաստաթուղթն անգամ ծիսական լուրջ փոփոխություններ է վերագրում հայրապետին. «...բաժանեաց ի միմեանց զմիաւորեալ Ծնունդն և զՄկրտութիւնն, և զիաչեցարն յերիս սրբասացութեանցն որոշեաց»[50]: Նման հիմնավոր ծիսական կետերի վավերականությունը ենթադրելու փաստը «անստոյգ գրուածի մը հեղինակութեամբ»[51] բացառում է խնդրին լայնորեն անդրադարձած Մ. Օրմանյանը: Այնուամենայնիվ, նման փաստեր տրամադրում է ոչ միայն հիշյալ փաստաթուղթը: Ստեփանոս Օրբելյանը, օրինակ, նշում է, թե «...Եվ անդ (Դվինում – Կ. Մ.) կամեցան ժողովով հաստատել զնոր օրէնսն զոր առին»[52], իսկ երկաբնակ երանգավորմամբ նոր վարդապետությունն այդ դեպքում ակնհայտորեն կպարունակեր թե՛ դավանական և թե՛ ծիսական տարբերություններ: Կիրակոս Գանձակեցին ավելի խիստ է իր մեղադրանքի մեջ. «... և եկեալ ի Հայս փոխեաց զամենայն ուղղափառ կարգաւորութիւնս եկեղեցւոյ և զընթերցուածս Յակոբայ և Կիւրղի, փոխանակ այնորիկ զԱրտեմոնին եդեալ»[53]: Դեռևս IV դարից Կյուրեղ Երուսաղեմացին և Հակոբ Մծբնեցին, հերքելով հայտնի բոլոր հերձվածները, կարգել էին եկեղեցական տոները, ընթերցումները և սաղմոսերգությունները: Հայոց հայրապետը, համաձայն Կիրակոս Գանձակեցու, ընդունում է հերձվածող Արտեմոնի նշանակած տոներն ու ընթերցվածները:

Վկայաբերված բոլոր այս փաստերը տարակուսանք են պատճառում, որովհետև 633 թ. Կարինի ժողովից հետո էլ բավական երկար ժամանակ Եզր Փառաժնակերտցին մնաց հայոց եկեղեցու հայրապետը՝ նվիրելով իրեն վանական վերանորոգության, եկեղեցական ծիսակատարության և բարեկարգության հարցերին[54]:

Եզր Փառաժնակերտցու հայրապետության շրջանում հայ-բյուզանդական եկեղեցական միությունը խարսխվեց մի կամքի վարդապետության շուրջ: Իսկ վերջինս, իր միջին դիրքորոշմամբ, բավական զատորոշվում էր ծայրահեղ երկաբնակ մի այնպիսի դավանությունից, ինչպիսին քաղկեդոնականությունն է: Դա է պատճառը, որ, բացառությամբ Հովհաննես Մայրագոմեցու, որևէ հակառակության փաստ կաթողիկոսի հանդեպ միջնադարյան հայ աղբյուրները չեն վկայում[55]:

---

[50] *Գիրք թղթոց, էջ 222:*

[51] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., այն 669:*

[52] *Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 118:*

[53] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 31:*

[54] *Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 80, Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, էջ 62, Յովհաննու Իմաստասիրի Սւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1953, էջ 42, 123:*

[55] *Ա. Զամինյանը, օրինակ, մեջբերելով Սեբեոսի Պատմության մեջ պահպանված անսովոր մի նախադասություն, որն անմիջապես հաջորդում է ժողովի պատմությանը, այն է՝ «Եւ ապա յայնմհետէ նստէր (Եզրը – Կ. Մ.) ի մէջ բանակին Յունաց...» (Ս ե բ ե ո ս, էջ 132), արտահայտում է ծայրահեղ մի կարծիք, թե «Մայրագոմեցու հալածելով Եզրի դեմ եղած հակառակությունը չվերջացավ, այլ այնքան սաստկացավ, որ նա հունաց բանակում ստիպվեց ապրել» (Ա. Զ ա մ ի ն յ ա ն. Հայոց Եկեղեցու պատմություն, Նոր-Նախիջևան, 1908, էջ 128): Սակայն Սեբեոսի*

Կարինի ժողովին հայոց եկեղեցու նվիրապետներից ներկա էին հաշված թվով եպիսկոպոսներ և վարդապետներ: Եթե միությունը բյուզանդական եկեղեցու հետ հիմնվեր զուտ Քաղկեդոնի դավանության վրա, ապա ժողովից հետո հաստատապես կկրկնվեր նույնը, ինչ կատարվեց 689–90 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական միությունից հետո՝ Սահակ 3-րդ Զորափորեցի կաթողիկոսի ժամանակ, երբ, վերադառնալով Հայաստան, Քաղկեդոնի դավանությունն ընդունած կաթողիկոսն ու նրան համախոհ եպիսկոպոսները հանդիպում են միաբնակ վարդապետությանը հավատարիմ հոգևորականների ընդդիմությանը: Վերջիններս հրաժարվում են ընդունել հունական եկեղեցուն հարած հայոց եկեղեցու նվիրապետության հեղինակությունը՝ պահանջելով նզովել քաղկեդոնականներին: Հայոց կաթողիկոսը և նրան համախոհ եպիսկոպոսները, զիջելով այս հարկադրանքին, բանադրում են և՛ քաղկեդոնականներին, և՛ նրանց իսկ[56]*:*

Այնուամենայնիվ, միջնադարյան շատ պատմիչների կողմից Եզր Փառաժնակերտցին որակվեց որպես քաղկեդոնիկ, որպես «խաւարաբերն եկեղեցւոյ»[57]*: Ավելին, համաձայն որոշ աղբյուրների, ընդհուպ մինչև VIII դ. սկիզբը, հայոց հայրապետները դավանում էին քաղկեդոնականություն*[58] *և միայն Հովհան Օձնեցին է, որ «...զխմորեալ աղանդն Եզրայ, որ յաւուրս վեց կաթողիկոսացն, մաքրեաց և ահագին նզովիւք հեռացոյց ի Հոռոմոց»*[59]*: Եզր Փառաժնակերտցուց հետո ևս վեց կաթողիկոսների՝ քաղկեդոնականությանը հարած լինելու փաստը, անշուշտ, չի համապատասխանում պատմական իրողությանը, ինչպես արդեն հայագիտության մեջ նշվել է*[60]*: Իսկ Հովհան Օձնեցու հայրապետության շրջանում Մանազկերտի ժողովը (719 թ.) գումարվեց իրականում, ինչպես Ստեփանոս Տարոնեցին է մատնանշում, «... սրբելով յաշխարհէս զքաղկեդոնականացն երկաբնակ խոստովանութիւն և զաւանդութիւնն... որ յաւուրցն Եզրի մինչև ցայս մնացեալ էր յաշխարհիս Հայոց ի մասինն Յունաց»*[61]*:*

Հայ-բյուզանդական եկեղեցական միությունը 633 թ. իր հերթին յուրատեսակ խթան հանդիսացավ հատկապես Հայաստանի բյուզանդական հատվածի եպիսկոպոսների համար՝ դավանական և ծիսական առումով ենթարկվելու բյուզանդական եկեղեցուն: Իսկ ենթարկումը պայմանավորված էր առաջին հերթին ժողովի արդյունքում ձեռք բերված դավանական համերաշխությամբ:

տեքստն այստեղ հստակ չէ, և նման նախադասությամբ սկսվող հատվածի բովանդակությունն առհասարակ անհասկանալի է:

[56] *Դավանական միության այս փաստի մասին տե՛ս* Narratio de rebus Armeniae, p. 109*: Իրադարձությունը, բավական անորոշ և մութ, պատմում է նաև Ստեփանոս Տարոնացին (Ս տ ե փ ա ն ո ս. Տ ա ր ո ն ա ց ի, էջ 100-101):*

[57] *Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 114:*

[58] *«Սակս ժողովոց...».– Գիրք թղթոց, էջ 222, Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 119, 137, 455, Մ ի ք ա յ ե լ Ա ս ո ր ի, էջ 301:*

[59] *Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 455:*

[60] *Տե՛ս, օրինակ՝ Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., այն. 750, 751, 770 և այլն:*

[61] *Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, էջ 103:*

ПОЛИТИКО-ЦЕРКОВНАЯ СИТУАЦИЯ В ВИЗАНТИИ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ VII В. ПОПЫТКА ОБЪЕДИНЕНИЯ АРМЯНСКОЙ И ВИЗАНТИЙСКОЙ ЦЕРКВЕЙ

КАРИНЕ МЕЛИКЯН

Р е з ю м е

В VII в. в Византийской империи монофизиты имели явное преимущество перед халкедонитами. Император Геракл (610-641) намеревался объединить всех монофизитов с византийской церковью благодаря новой формуле–доктрине одной энергии и одной воли, т.е. монотелизм. Вначале доктрина укоренилась среди армян на острове Кипр, которые обосновались там в 577 г. Геракл заключает соглашение с епископом Кипра и таким образом впервые проповедуется доктрина одной воли. В средние века церковная доктрина имела политическое значение, с этой точки зрения очень важна история сношений между армянской и византийской церквами. Геракл использовал монотелизм как политическое средство, стремясь примирить монофизитскую армянскую церковь с византийской. В 633 г. созывается собор в Карине, где католикосом Армении была принята доктрина одной воли. Армянские средневековые источники не дают никакой информации о факте монотелизма, они свидетельствуют, что в соборе в Карине католикос принял теологию Халкедона.

POLITICAL AND ECCLESIASTICAL SITUATION IN BYZANTINE EMPIRE IN THE FIRST HALF OF THE 7th CENTURY. THE ATTEMPT OF UNIFICATION OF ARMENIAN AND BYZANTINE CHURCHES

KARINE MELIKYAN

S u m m a r y

In the 7th century in Byzantine empire the antichalcedonians were far more numerous than the Chalcedonians. Emperor Heracles (610- 641) dreamt that it might be possible to unite all the monophysites with the Byzantine church by a new formula – doctrine of a single energy and a single will, called monothelism. In the island of Cyprus there was a colony of Armenians, that was settled there by Justin II in 577. Heracles entered into an agreement with the bishop of Cyprus and the doctrine of one energy and one will was first taught there. It was before 626. In the Middle ages the doctrine of Church had its political importance and from this point of view is very important the history of relations between the Armenian and the Byzantine churches. Heracles made a political weapon of monothelism and tried to reconcile the monophysitic Church of Armenia with the orthodox Byzantine Church. In 633 was held the synod of Karin, where the Catholicos of Armenia accepted the new doctrine of one will. Armenian medieval sources don’t inform the fact of monothelism, on the contrary, they evidence that the synod of Karin has brought into connection with the doctrine of Chalcedon.